«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 48/02

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 30.08.2019թ. ժամը 17:00

Համաձայն 08.07.2019թ-ին «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում ստացված,քաղաքացի-պարտատեր՝ Սուսաննա Կարապետյանի դիմում-բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, քաղաքացի Սմբատ Փիլիպոսյանի,սնանկության գործով կառավարիչ՝Արամ Խաչատրյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով,կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում արծածված հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար՝ ս/թ-ի Օգոստոսի 30-ին,17-00-ին՝ք.Երևան,Արշակունյաց 5 հասցեում, հրավիրվել էր «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստը:

«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Աղամյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Դիմումատու՝քաղաքացի -պարտատեր՝ Սուսաննա Կարապետյանը
Քաղաքացի Սմբատ Փիլիպոսյանի սնանկության գործով կառավարիչ՝Արամ Խաչատրյանը

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝

Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հենրիկ Մարտիկյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Աղամյանը
Դիմումատու՝քաղաքացի -պարտատեր՝ Սուսաննա Կարապետյանը
Քաղաքացի Սմբատ Փիլիպոսյանի սնանկության գործով կառավարիչ՝Արամ Խաչատրյանը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1.08.07.2019թ-ին «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում ստացված,քաղաքացի-պարտատեր՝ Սուսաննա Կարապետյանի դիմում-բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, քաղաքացի Սմբատ Փիլիպոսյանի,սնանկության գործով կառավարիչ՝Արամ Խաչատրյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, բողոքում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը ստեգելով ներկաների լիազորությունները և անձը հաստատող փաստաթղթերը բացեց նիստը և «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործերով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման Կարգի» 4.6 հոդվածի կարգով դիմում-բողոքը ներկայացնելու համար ձայնի իրավունք տվեց դիմումատու Սուսաննա Կարապետյանին,ով հակիրճ ներկայացնելով դիմում բողոքը մասնավորապես նշեց,որ սնանկության գործով կառավարիչ ՝Արամ Խաչատրյանի կողմից սնանկության վարույթի սահմանված գործառույթները տարվում են թերի և 2 տարի ուշացումներերով որով կառավարիչը վնասներ է պատճառում իրեն այսինքն պարտատիրոջը,իր վարույթով հետաքրքրվելով,ժամկետների վերաբերյալ կամ կատարվելիք գործառույթների վերաբերյալ հիշեցումները,զգուշացումները պահանջները կառավարչի կողմից ընդունվում են շատ վատ, ուղղկցվում են հեռախոսազանգերի և գրությունների չպատասխանելով,փաստաթղթերի

չտրամադրելով և կոշտ ու կոպիտ վերաբերմունքով,որից ինքը շատ վիրավորված է և չի ցանկանում որ նման «Անձի» հետ աշխատել:

«ՍԳԿԿ» ԻԿԿ կարգապահական հանձնաժողովի ներկա անդամներից՝Ռ.Խալաթյանը հարց ուղղեց դիմումատուին առ այն թե արդյոք նա գրավոր դիմում կամ դիմներ ունի կառավարին հասցեյագրված,որոնց կառավարիչը չի պատասխանել,կամ դրանց վերաբերյալ որևէ այլ վերաբերմունք չի ցուցաբերել:

Դիմումատուն պատասխանեց որ դրանք առկա են և հանձնաժողովին ներկայացրեց 14.09.2018թ-ին և 15.03.2019թ-ին կառավարչին հասցեյագրված գրությունների լուսապատճենները:Հանձնաժողովի անդամը ուսումնասիրելով դիմումները հարցրեց,թե դիմումատուն ունի արդյոք այդ դիմումները կառավարչին հանձնելու կամ ուղարկելու որևէ ապացույց:Դիմումատուն պատասխանեց որ հանձնել է անձամբ բայց ապացույց չունի:

Հանձնաժողովի անդամը հարց ուղղեց կառավարիչ՝Ա.Խաչատրյանին,թե արդյոք նա ստացել է դիմումները:Կառավարիչը պատասխանեց որ դիմումները բավականաին շատ են և ինքը ի վիճակի չէ գրավոր կարգով պատասխանել բոլոր դիմումներին,բայց բանավոր բոլոր դիմումներին իր կողմից պասխաններ տրվել է և եթե դիմումով պահանջվել է ինչ վոր գործառույթի իրականացում կամ փաստաթղթերի տրամադրում իր կողմից դրանք ամբողջությամբ կատարվել են:Հարցի մյուս կոմն է այն թե ինչքանով է այդ կատարումից գոհ մնացել պարտատերը կամ ինչքանով է եղել այդ գործողությունները արդյունավետությունը կամ օգուտը պարտատիրոջ համար:

Կանոնակարգի համաձայն իր դիրքորոշումը և բացատրություններ ներկայացնելու համար ձայնի իրավունք տրվեց՝քաղաքացի Սմբատ Փիլիպոսյանի սնանկության գործերով կառավարիչ՝ Արամ Խաչատրյանին,ով ներկայացրեց հանձնաժողովին,որ ստանձնելով սնանկության գործերի վարույթներով ՍԳ կառավարչի պարտականությունները իր կողմից կատարվել են օրենքով սահմանված իր լիազորությունների իրացում,որը իր կողմից կատարվել է բարեխղճորեն և ամբողջական,մասնավորապես դիմում նշված հանգամանքների վերաբերյալ հայտնեց որ դիմումատուն հանդիսանում է սնանկության վարույթով պարտատեր և սնանկության վարույթների ընթացքում բազմաթիվ անգամներ հանդիպել է իր հետ,խոսել և տեղեկացել գործերի իրականացման ընթացքից,ծանոթացել է տարբեր փաստաթղթերի և ընդհանրապես միշտ եղել է տեղեկացված վարույթների ընթացքից:

Ինչ վերաբերվում է կոպիտ խոքերին,որը այդ կերպ վիրավորել է պարտատիրոջը հայտնեց,որ դրանք աշխատանքային պռոցեսում տեղի ունեցած միջադեպեր են և ինքը ոչ թե կոպիտ արտահայտություններ է արել,այլ փորձել է ժամանակի առումով կոնկրետացնել հիմնականում հեռախոսազրույցները,քանի որ պարտատերը քանակական և ժամանակատարության առումով ,շատ է զանգահարում և շատ ժամանակ է վատնվում նրան բացատրելուց նույն բանը մի քանի անգամ:Իր կողմից հրավիրված պարտատերեի ժողովի մասին հայտնում է,որ այո այդ օրը ինքը ուշացել է ժողովից,բայց ներս մտնելով ներողամտություն հայցել սպասեցնելու համար և բացատրել է,որ խցանումն է եղել պատճառը իր ուշացման,որից հետո պարտատեր դիմումատուն բավականին կոշտ կերպով պատաս-խանել է,որ եթե այդ կերպ էր լինելու ապա նա ինչու չհամաձայնեց ժողովը հետաձգելու իր խնդրանքներին,որպեսզի իր փաստաբանի ներկայությունը ապահովվի,.այդ կերպ վեճի առիթ տալով,որի պատճառով պարտատերեի ժողովը կազակերպվեց և անցկացվեց թերություններով,որը և առիթ դառավ հետագա բողոքին դատարան և նաև հիմք հանդիսացած իր լիազորությունների դադարեցման որոշման կայացմանը,որին ,ի դեպ ինքը առարկել է և ՀՀ Վերաքննիչ դատարան է ներկայացրել համապատասխան բողոք,որը դեռ քննության մեջ է և արդյունքների մասին կտեղեկացվի հաջորդիվ:

Ինչ վերաբերվում է դիմումատուի այն նշումներին թե իր կողմից չի տրամադրվում վարույթից տեղեկատվություն և նյութեր,ապա դա իրականությանը չի համապատասխանում,որովհետև ինչպես նշեցի նա մշտապես տեղեկացված է վարույթի ընթացքի մասին և իր դիմումներով հիմնականում պահանջում է օրենքների որոևէ կետի կամ հոդվածի բացատրություններ,որոնց կառավարի կողմից անդրադարձ կատարելու և գրավոր պատասխանելու դեպքում կառավար բուն վարույթով զբաղվելու ժամանակ չի մնում և խոչնդոտվում է կառավարչի աշխատանքը և լիազորությունների իրականացումը:

Դիմումատուն հայտարարեց որ կառավարիչը ճիշտ չի պատասխանում հարցերին և չի ներկայացնում իրականությունը,որը ապացուցվել է նաև 07.08.2019թ-ի դատարանի թիվ ԵՇԴ/0188/04/17 որոշմամբ,ըստ որի նրա լիազորությունները դադարեցվել են այս գործով:

Հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին նիստին ներկայացված որոշման լուսապատճենը և հանձնաժողովի անդամ՝Ա.Աղամյանը առաջարկեց հիմք ընդունել որոշման մեջ արծածված փաստերը,դիմում-բողոքի և լրացուցիչ ներկայացված փաստաթղթերի ու և կառավարչի բացատրությունները քաղաքացի Սմբատ Փիլիպոսյանի սնանկության գործերով կառավարիչ՝ Արամ Խաչատրյանին հայտարարել բանավոր նկատողություն:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը հայտնեց այն կարծիքը,որ ուսումնասիրելով դիմումը և ներկայացված փաստաթղթերը ակնհայտ է,որ պարատեր հանդիսացող դիմումատուն ձգտում է ամեն կերպ ստանալ պարտապաններից իր պահանջների բավարարումը և ինչքան հնարավոր է շուտ:Այդ նպատակին հասնելու համար իր կարծիքով խանգարող կամ արագ ու իր բոլոր ցանկությունները չիրագործվող,հանգամանքներին այդ թվում կառավարչի գործողություններին վերբերվում է վերապահումով և գնահատում է իր տեսակետից: Բացի դրանից դիմում նշված կառավարչի կողմից դիմումներին չպատասխանելու և պարտապանին վարույթի ընթացքի մասին տեղեկատվություն չտրամադրելու փաստերը չեն հերքվում նաև կառավարչի կողմից,այսինքն առկա է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի /ժա/ կետի 2-րդ ենթակետի պահանջների թերի կատարում,որը և իր կարծիքով հանգեցրել է այս իրավիճակին:

Հաշվի առնելով դատարանի որոշումը, ուսումնասիրելով ներկայացված փաստաթղթերը և դիմումում շարադրված փաստերը հանձնաժողովի նախագահն համաձայնելով արտահայտած կարծիքների հետ նշեց որ համաձայն «Սնանկության գործով կառավարչի Վարքագծի կանոնագրքի» *1.8.կետի ՍԳ կառավարիչը պարտավոր է իր գործառույթները իրականացնել բարեխղճորեն և արդյունավետ*:

1.9. կետի ՍԳ կառավարիչը պարտավոր է կողմերին պարզաբանել սնանկության գործընթացի բնույթը և էությունը նաև ապահովվել հարգալից և անկողմնակալ վերաբերմունք պարտապանի և պարտատերերի նկատմամբ:

Այս պարագայում սնանկության գործով կառավարիչ՝Արամ Խաչատրյանը իր կարծիքով չի ապահովվել,որի պատճառով էլ առաջացել է կողմից դժգոհությունը վարույթի իրականացումից և հետագայում էլ այն վերածվել է բողոքների :

ՀՀ Սնանկության դատարանի որոշմամբ քննարկված փաստերով կառավաիչը իր գործառույթները կատարել է ոչ բարեխղճորեն և արդյունավետ չի ներկայացրել դրանք չապահովվելով վարույթի թափանցիկությունը և տեղեկատվության ճիշտ մատուցումը,մասնավորապես պարտատիրոջը:

Վերոնշյալի հիմքով առաջարկեց «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 5-րդ հոդվածի 5.1.կետի 3-րդ մասի հիմքով հայտարարել նախազգուշացում և հանձնարարել կառավարչին արդյունավետ իրականացնել «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իր լիազորությունները,ապահովվելով վարույթի թափանցիկությունը և տեղեկատվության բարեխիղճ տրամադրումը:

Հանձնաժողովի մյուս անդամները համակարծիք եղան առաջարկին և քվերկեցին

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

1.08.07.2019թ-ին «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում ստացված,քաղաքացի-պարտատեր՝ Սուսաննա Կարապետյանի դիմում-բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, քաղաքացի Սմբատ Փիլիպոսյանի,սնանկության գործով կառավարիչ՝Արամ Խաչատրյանի

գործողությունները /անգործություն/ օրենքին և կանոնակարգերին համապատասխանության վերաբերյալ հարուցված վարույթի արդյունքներով՝ միջնորդել «ՍԳԿԿ» ԻԿԿ Դիտորդ խորհրդին «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 5 հոդվածի 5.1 կետի 3-րդ ենթակետի հիմքով քաղաքացի Սմբատ Փիլիպոսյանի,սնանկության գործով կառավարիչ՝Արամ Խաչատրյանին հայտարարել բանավոր նկատողություն և հանձնարարել կառավարչին արդյունավետ իրականացնել «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի /ժա/ կետի 2-րդ ենթակետով նախատեսված լիազորությունները,ապահովվելով վարույթի թափանցիկությունը և տեղեկատվության բարեխիղճ տրամադրումը:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝Հ.Մարտիկյան